ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

- ք. Երևան, փ. Բուզանդ 1/3
- г. Ереван, ул. Бузанда 1/3
- 1/3 Buzand st., Yerevan
- www. expertise@env.am

Հեռ.(374 011) 220-218
Тел. (374 011) 220-218
Tel. (374 011) 220-218

ԲԱՀ-26/482
«25» 09 2024թ.

Վայոց ձորի մարզի Ջերմուկ
համայնքի ղեկավար պարոն Վահագն Արսենյանին

Հարգելի պարոն Արսենյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման հավելվածի համաձայն, 2024 թվականի հոկտեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին, Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրի ղեկավարի նստավայրում տեղի կունենա՝ «ՎԱՅՔ ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Վայոց ձորի մարզի Ջերմուկի ԱԿԽ-ի երևակման 3-րդ տեղամասի սահմաններում նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փաթեթի վերաբերյալ հանրային քննարկում (2-րդ փուլ):

Խնդրում եմ Ձեր լիազորությունների շրջանակներում կազմակերպել և իրականացնել հանրային քննարկումները՝ ապահովել համայնքի, հանրության շահագրգիռ մարմինների մասնակցությունը հանրային քննարկումներին՝ դրանց արձանագրությունը, տեսաձայնագրությունը, ինչպես նաև բարձրացված առաջարկություններն ու դիտողությունները ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման հավելվածի համաձայն, հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում (www.env.am), «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին ք. Երևան, Բուզանդի 1/3 հասցեում:

Տնօրենի
պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան